

Հայկ Ազգային

ՋԵՅԹՈՒՆԻ 1862 թ. ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ 19-ՐԴ ԴԱՐԻ
60-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ¹

Անցյալ դարի թուրքահայ ազատագրական պայքարի հրաբխային հսկա լեռան շմարող խառնարանը Ջեյթուն գավառն էր, որը մերթ ժայթքում էր կատաղի ձևով, սրբում թուրքական բանակներին, ոչնչացնում իր բռնադատիչներին, ծնկաշոք անում օտոմանյան անվանի զորավարներին, մերթ խաղաղվում, անցնում ստեղծագործ աշխատանքի, նոր ուժեր գումարում, նախապատրաստվում ապագա, հերթական մարտերին: Քառասունից ավելի են եղել արշավող թուրքերի պարտությունները՝ հերոսական Ջեյթունի, անսոսիկ ամրոցի պատերի տակ, սակայն դրանցից ամենանշանակալիցն ու ուշագրավը 1862 թվականի փառապանծ գոտեմարտն էր, մի մարտ, որն իր վրա հրավիրեց ողջ հայություն, Ռուսաստանի, Եվրոպայի ուշադրությունը և Ուլսիան մի պահ դարձրեց մեր ժողովրդի ազատագրության հույսը, դեպի ազատություն քայլող, հզոր թշնամիներին դիմադրավող հայության ճանապարհի լուսատու փարոսը:

Ահա թե ինչու Ջեյթունի այս ապստամբությունը լայն արձագանք գտավ և համակրանքի արժանացավ Հայաստանի երկու հատվածներում, հայ գաղթավայրերում և աշխարհով մեկ ցրված աստանդական հայության մեջ, բոցավառեց հայկական ամենահեռավոր օջախներում մոխիրների տակ հանգչող հայրենասիրական կրակը, երբեք ազատության հույս ներշնչեց մեր ժողովրդի տառապյալ զավակներին, ստիպեց, պանդխտության պատրաստվող զեղչուկի ցուպը՝ սրով և հրացանով փոխարինելուն:

Ջեյթունի 1862 թվականի ապստամբության լուրը կայծակի արագությամբ սփռվեց Հայաստանով մեկ: Ազդեց փառայի արշավանքի մասին ամենից առաջ իմացվեց սուլթանի նստավայրում՝ Կոստանդնուպոլսում, այնուհետ, որտեղ ապրում էին 250 հազարից ավելի հայեր, որտեղ կային միլիոնատեր հայ ամիրաներ, կայսերական բարձրաստիճան պաշտոնյաներ, հայոց պատրիարքարան, պարբերական մամուլ, թատրոն, հայկական տպարաններ և վերջապես հիմնականը՝ Արևմտյան Հայաստանը լքած հայ պտնդուխտները, արհեստավորները, ազատագրական պայքարի ամենակենսունակ, վստահելի և արմատական շահեր հետապնդող մասը:

Օգոստոսի 1-ին, երբ թուրքական բանակը կրակ էր թափում հերոսական ճիզերով դիմադրավող Ջեյթունի վրա, Պոլսի հայ ամիրաները, պատրիարքը, փառքի ու շահի տենչից կուրացած, անտարբերությամբ բազմել էին իրենց վիլլաներում և շփոնալու էին տալիս եղբայրակիցների կոտորվելու փաստը: Ապստամբության հաղթանակից հետո նրանք միայն միջնորդի դեր էին կատարում սուլթանական Սեմի և հայրենակից ղեկավարներին միջև, հորդորում

¹ Ջեյթունի կարգապահ 1962 թ. հոկտեմբերի 5-ին, ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի գիտական նիստում՝ նվիրված Ջեյթունի 1862 թ. ապստամբության 100-ամյակին:

հպատակություն՝ «վեհաշուք ու հայախնամ սուլթանին», դատապարտում նրանց արարքը: Ազգային ժողովի անգործունյա երեսփոխանները, մասնավորապես լուսավորական հովերով տարված Սերվիշեն, Դր. Օտյանը, Պայյան եղբայրները, կարճ ասած երեկվա «լիւերալ սահմանադրականներ», երկնշերտ ժողովրդական հուժկու շարժումներից, գերադասեցին դաշինք պահպանողականների հետ և հանդես եկան խաղաղասիրական քարոզներով, պատճառաբանելով, թե հայն այլևս արյուն չունի: Թափելու, ուստի նա պետք է կուտուրապես վարդանա, լուսավորվի-և այդ ճանապարհով գտնի իր փրկությունը:

Կաթոլիկների առաջնորդ Անտոն Հասունյանը, ընդառաջելով Նապոլեոն 3-ի եռակենտրոն նվաճողական քաղաքականությանը, հանդես եկավ ազգայինների դավանափոխման, կաթոլիկացման, Ֆրանսիայի հովանավորությունն ընդունելու քարոզներով և փաստորեն դավաճանեց հայ ազատագրական համընդհանուր շարժումն առաջացնելու, այն սլավոնական ու իտալական ազատամարտիկների բանակներին միացնելու Գերցեն-Նալբանդյան-Սվաճյանական ծրագրերին: Այն պահին, երբ Պոլսի հայ վերնախավը տարված էր դավանափոխության քողի տակ թաքնված շահագիտական, երկպառակտիչ պայքարի մարմաջով, աշխատավորական մասսաները, օրավարձու հայ մշակները այրվում էին զեյթունցիներին օգնելու տենչից և մտահոգվում էին ռեալ օգնություն հասցնել ապստամբ եղբայրներին:

1862 թվականի օգոստոսի 1-ին, Ազիզ փաշայի Զեյթունի վրա հարձակվելու օրը, Կ. Պոլսի հայ արհեստավորները, պանդուխտ օրամշակները մայրաքաղաքում ցույց կազմակերպեցին, շարժվեցին դեպի հայոց պատրիարքարանը, չրջապատեցին այն և սկսեցին քարեր տեղալ պատրիարքի ու Ազգային ժողովի երեսփոխանների վրա: Ավելի քան երկու հազար հոգուց բաղկացած ցուցարարները պահանջում էին գործադրության մեջ դնել արևմտահայերին խոստացված «Ազգային սահմանադրությունը», վերջ տալ հայերի հալածանքներին Արևմտյան Հայաստանում և դադարեցնել արյունահեղությունը Կիլիկիայում— Զեյթունում: Առավոտից մինչև երեկո տևող ցույցը ճնշվեց Սելիմ փաշայի զլխավորած զինվորականների բռնության ուժի տակ, իսկ ցուցարարներից ոմանք բանտարկվեցին և ծեծվեցին: Օգոստոսի 1-ի ցույցը մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ Զեյթունի ապստամբության մասին նախօրոք իմացել են պոռաբայ դեմոկրատները և գործարար կապերի մեջ են եղել նրանց հետ: Սակայն մեր ասածը տակավին մնում է ենթադրություն, քանի որ կարոտ է ուշադիր ուսումնասիրության և առավել կշռոյթավոր փաստարկների:

Մեկ շաբաթ չանցած, Պոլսում սկսեց պտսվել Ազիզ փաշայի բազմահազարանոց բանակի պարտության լուրը: Կատաղած էր կայսերական պաշտոնությունը, ցնծության ու ոգևորության մեջ էր հայ երիտասարդությունը: Մարկոս Աղաբեկյանի քույր Սրբուհի Աղաբեկյանը, ապագայում Ալեքսանդր Երիցյանի կին Սրբուհի Երիցյանը, այդ օրերին Պոլսում էր և հետագայում «Փորձում» տպագրած իր հուշերում պատմում է. «Զեյթունը հայ ժողովրդի ոգևորության ու ազգային հպարտության խորհրդանշանն էր այդ օրերին. այն տարին Զեյթունի անցրերը մեծ ազդեցություն ունեցան Պոլսո և այլ տեղերի հայոց վրա. ամենայն ոք Կիլիկիան ուներ ի բերան, ամենայն ոք մասնակից էր դրամական հանգանակության... Նույնիսկ հռոմագավան հայ երիտասարդները մոռացել էին զեպի իրենց լուսավորչական եղբայրներն ունեցած ատելությունը, և ամենայն սիրով թե նյութապես, և թե բարոյապես օգնում

լին այդ ձեռնարկություններին: ... Վերջապես մեծ համակրություն կար ամենայն կողմանն ղեպի հայությունը»¹:

Պոլսահայ դեմոկրատական երիտասարդությունը նոր միջոցներ էր որոնում զեյթունցիներին օգնելու համար: Նոյեմբեր ամսին, Ազգային քաղաքական ժողովի մի խումբ երեսփոխանների առաջարկով, պատրիարքի տեղապահ Ստեփան Նիկոմեդացի եպիսկոպոսը թույլտվություն հրապարակեց գաղափար «Թշվառ հայության» նյութական օգնություն կազմակերպող ընկերության հիմնադրման մասին: Նոյեմբերի 24-ին կազմվեց այդ ընկերությունը, որի մեջ ակտիվ դեր կատարեցին Մ. Մամուրյանը, Մ. Պեշեքչյանը, Կ. Փանոսյանը. ընկերությունը իր մասնաճյուղերը հիմնեց Թիֆլիսում և Կովկասի այլ վայրերում: Միայն Պոլսից 20.000 ոսկի հավաքվեց և ուղարկվեց Զեյթուն:

Ապստամբության հաղթանակից հետո Պոլիս ժամանեցին Տեր-Մովսես քահանան և Մնացական Սեմերճյանը: Երեք շաբաթ շարունակ նրանք գտնվում էին պոլսահայ առաջավոր մտավորականների ուղադրության կենտրոնում: Ամենուրեք կազմակերպում էին երեկույթներ, լսում նրանց զեկուցումները, այլովոգ հետաքրքրությամբ տեղեկանում հերոս, բայց ահավոր վտանգի տակ ապրող զեյթունցիների վիճակին, պատգամավորների միջոցով հաստատուն կապեր ստեղծում Պոլսի և Զեյթունի՝ հայության երկու ստվար բեկորների միջև:

Զեյթունի իրադարձությունները լայն արձագանք գտան Արևմտյան Հայաստանի ազգարնակչության մեջ, մասնավորապես Վասպուրականում, Տարոնում, Դերսիմում, էրզրումի վիլայեթում: Ապստամբության և հաջորդ մի քանի տարիներում կարծես կենդանացավ գաղափարահայությունը, փորձեց հրազենով ապացուցել, որ եթե ինքը ոտքի կանգնի, ճանապարհից կարող է մաքրել իր անարգ թշնամիներին:

Ամենից վաղ զարթոնեց Վասպուրականը: Դեռևս փետրվար-մարտ ամիսներին արտասահմանյան և հայկական մի քանի պարբերաթերթեր ազդարարեցին Վանում սկսվող խռովությունը: Սակայն այն զինված ելույթի վերաճեց Զեյթունի ղեպերից քիչ հետո և անմիջապես նրա ազդեցությամբ:

Վասպուրականը Արևմտյան Հայաստանի սիրտն էր, նրա զարգացած և համեմատաբար լուսավորված գավառը, քանի որ տակավին 1850-ական թվականներին, այն՝ ինչպես գաղութահայ մտավորականությունից, այնպես էլ իր ծոցում՝ սնած, Պոլիս ու այլուր կրթության ուղարկած սաներից՝ վերադարձի, լույսի շող ստացավ: Մ. Խրիմյանը հայրենիք գալով իր հետ գավառ բերեց պարբերաթերթի հրատարակելու, դպրոց բացելու մտահղացում: Վասպուրականի սրծիվը վարագ տեղափոխեց տպագրական մեքենա և սկսեց լույս ու կրթություն տալ օգնության կարոտ իր ձագուկներին: Դուռներբեզի գյուղւոր ժպտաց հայ գեղջուկին, նրան պատմելով աշխարհում կատարված հին ու նոր անցքերի, հարեան ժողովուրդների պայքարի ու հաղթանակների, հայերի փրկության ուղիների մասին: Եւ արեւմտահայության առաջին ճիշն էր, որ մի կողմից գավառը մխրճում էր Պոլսի սրտի մեջ, մյուս կողմից՝ ծնունդ տալիս հասարակական մի նոր ու թարմ հոսանքի՝ գաղափարահայ մտավորականությանը:

Եւաղափարահայ մտավորականությունը ամենից առաջ Վանում նախապատրաստեց ազատամարտիկներ, որի պտուղները ևղան 1862 թվականի զոհերը

Ոգոստոս ամսին Վանի հայ ազգայնակալությունը ընդհարվեց սուլթանական ուստիկանության հետ, զինված ջոկատները դրավեցին քաղաքի միջնաբերդը, քիչ հետո նաև Այգեհստանը: Կուսակալության մյուս մասերից օգնության հասան հայերը: Կառավարությունը, Ջեյթունում պարտվելուց հետո, զգուշությամբ փակ պահեց այդ ելույթը, արգելեց լուրեր տարել նրա մասին, մանավանդ, երբ իմացավ, որ մի քանի հազար քրիստոնյա քրդեր նախապատրաստվել են միանալու ապստամբներին: Հատկանշականն այն է, որ տեղական նշանակություն ունեցող այդ ելույթը դարձավ հայ-քրդական բարեկամության վառ ապացույց և ուղղվեց ընդհանուր թշնամու՝ սուլթանական կառավարության դեմ:

1863 թվականին ելույթներ եղան Մուշում, Չարսանջակում, Էրզնրում և Վիլայեթի Քդի գավառում:

Մուշի տիրակալ Սեֆի բեյը անարգել ասպատակում էր ամբողջ գավառը, պաթիթանների ու քուրդ զուլամների միջոցով կողոպտում անպաշտպան հայերին, առևանգում կանանց ու աղջիկներին, վերավորում քրիստոնյաների ազգային ու մարդկային զգացմունքները: Ժողովուրդը շտուկալով բռնության նման ծանրության տակ, եվրոպացի ճանապարհորդ Ֆ. Մելինդենի վկայությամբ, 1863 թվականին «բացահայտ ապստամբություն» բարձրացրեց Սեֆի բեյի դեմ: Ապստամբությունից հետո հայերը մի ընդարձակ բողոքագրով դիմեցին կառավարությանը, պահանջելով քուրդ աշիրաթապետներին դուրս վճռել գավառից: Մատթեոս Իզմիրլյանի վկայությամբ, մի քանի աշիրաթապետներ արսորվեցին, սակայն կարճ ժամանակից հետո վերադարձան իրենց տեղերը: Ապստամբ հայերը երկնչելով քրդական վրիժառույթունից, մոտ 300 ընտանիք թողեցին երկիրը և գաղթեցին Ռուսաստան:

1863 թվականին ժողովրդական բողոքներ ու ցույցեր եղան Քդի Դ. Երզնր-կայի գավառներում, ուր կիսանկախ, հաճախ և անկախ ձևով ապրում, տիրում ու վայելում էին քուրդ ցեղապետները՝ Ղուլիջանի քուրդ ղաջմագամը, Շահ Հյուսեյին օղի Հյուսեյին բեյը, Գուլար օղիին: Ջեյթունի, ապա և Վանի ու Մուշի անցքերից ոգևորված, հիշյալ գավառների հայերը որոշեցին 10.000 ուսույի փող հավաքել, մարդիկ ուղարկել Պոլիս և դատ բացել քուրդ աղանձի դեմ, ետ վերադարձնելու համար իրենցից բռնագրաված հողերը, անասունները, առևանգված հարյուրավոր ղեռահաս աղջիկներին և կանանց: Սրանց օրինակին հետևեցին Չարսանջակի հայերը:

Ուշադրության արժանի փաստ է, որ Չարսանջակի հայերին սկզբում ներքնապես համակրում էին, իսկ քիչ հետո նաև բացահայտ պաշտպանում դավառի եղիղները: Բողոքադրերի բնաբերկումը տևեց մինչև 1872 թվականը: Աղան դատական բաղմաթիվ ատյաններ, սակայն հայերը ոչինչ չստացան, իսկ քուրդ աղաներն օգտվելով կառավարության թուլությունից, իրենց արարքների մեջ ավելի սանձարձակ դարձան:

Այսպիսով, Ջեյթունի ազդեցության տակ ալեկոծվում էր թուրքահայ գավառը, զենքով ու բողոքագրով, սրով ու զրշով փորձում ազատություն նվաճել: Իժարախտաբար այդ շարժումներն անկապակերպ էին, անջատ-անջատ և մնացին դուռ տեղական ելույթներ, շունեցան համազգային այն հսկայական նշանակությունը, ինչ ունեցավ հերոս Ջեյթունը: Սակայն չպետք է մոռանալ, որ ինչպես այդ, առավել ևս Ջեյթունի իրադարձությունները դրսից եկած անհատների կազմակերպչական աշխատանքի պտուղներ չեն եղել, այլ ժողովրդական մասսաների մեջ դարերով կուտակված լուսման պոռթկումներ, որոնք

րոնկվել են առանց կանխակալ որոշումների: Արևմտահայ առաջավոր մտավորականությունը, տարերայնորեն ծավալված այդ շարժումների ընթացքում է միայն օգնել ժողովրդին, ղեկավարության փորձեր կատարել, պարբերական մամուլում տպագրել հանուր հայությունը «ի վեն, ի մարտ» կոչող բազմաթիվ իռզվածներ:

* * *

Զեյթունի հերոսամարտը արձագանք գտավ հայ պարբերական մամուլի էջերում, առիթ տվեց թեր ու դեմ կարծիքների բխմանը, հասարակական-քաղաքական հոսանքների՝ դեպի ժողովրդի ազատագրումն ունեցած դիրքի առավել բացահայտմանը: Համենայն դեպս, ամենից մարտական դիրք բռնեցին և ապստամբների բացահայտ պաշտպանությամբ հանդես եկան դեմոկրատական թերթերը, որոնք կենտրոնացված էին զաղուխահայ օջախներում:

Ապստամբության մասին Պոլսի հայկական բոլոր պարբերականներից առաջինը թերթերեն «Մյունատի» շաբաթաթերթը տպագրեց առաջին հոդվածը, որը կարգացվեց հուլիսին և առիթ տվեց առաջագետ մտավորականների ու ժողովրդական մասսաների արդարացի վրդովմունքին: Հաջորդ օրը «...Հիշելիքը, — առանց որևիցե բացատրության բանտարկվեցավ այնպիսի խիստ կերպով, որ երկար ժամանակ ոչ ոք չգիտեր, թե դա սպանվեցավ թե կենդանի է»²: Երեմիա Տեկանցը վկայում է, թե Փանոսյանը նստած սուլթանի քթի տակ «փաշադուխտական բարբարոս»³ էր անվանել նրա զորավար Ալիյի փաշային, պահանջելով պատժել վերջինիս արյունարբու զինվորներին, այլապես հայերը կգիմեն: Եվրոպական տերություններին և օգնություն կիսողներն նրանցից: Փանոսյանը բանտում սաստիկ ծեծվեց, և սեպտեմբերի 11-ին միայն ազատվեց, իսկ արևմտահայ դեմոկրատիայի կարևոր օրգաններից մեկը՝ «Մյունատին» դատապարտվեց հավիտենական լուծության:


«Արևմտահայ դեմոկրատիայի մաքուր բերան, ազգի ցավերի ճշմարտապես հայտարար» «Մեղու» պարբերաթերթը ավելի հանգամանորեն անդրադարձավ Զեյթունի ապստամբությանը: Թերթի խմբագիր Հարություն Սվաճյանը մասնակցեց պոլսահայերի օգոստոսի 1-ի ցույցին, իսկ նույն երեկոյան պատրաստեց ու հրապարակեց մի մարտաշունչ հոդված, որտեղ նա հարձակում էր գործում ռուսական «Современное Слово» և անգլիական «Լեանդ Հերալդ» թերթերի թղթակիցների վրա, որոնք պաշտպանում էին մեծ տերությունների էքսպանսիոնիստական քաղաքականությունը: Սվաճյանը ուղղակի ղեկք է կոչում արևմտահայությանը, խրախուսում այդ մեթոդով օգնել Զեյթունի եղբայրներին: Ապստամբության օրերին նա տպագրեց Ս. Շահազիզյանի հետևյալ տողերը.

Ոչ ոք չի կարող եղուս նպատակ
Տենել. խոստակել բռնության զենքով.
Ոչ սուր, ոչ արյուն, ոչ բանտ. ոչ կայծակ.
Ոչ նույնիսկ զենք մտավառ լոցով:

² «Փորձ», 1876—1877, № 1, էջ 172:

³ ՀՍՍԻ Մատենադարան, ձեռագիր 4177, էջ 10բ:

⁴ «Մեղու», 1862, № 170, էջ 177:



Զեյթունի ապստամբության օրերին Սվաճյանը հրապարակախոսությունը զուգընթաց գաղտնի աշխատանք էր ծավալում պոլսահայության մեջ: Ռեակցիոն-պահպանողական հայերի սադրանքով օգոստոսի 10-ից 20-ը «Մեղուն» ևս փակվեց, Սվաճյանը ենթարկվեց հարցաքննության և սպառնալիքի: Նույն տարվա վերջերին մի քանի ամսով Սվաճյան-Մեղունյան անհայտացավ հրապարակից: Կարծիքներ կան, որ նա շրջել է Արևմտյան Հայաստանը և եղել Տավրոսում:

Զեյթունի դուցազնամարտը պաշտպանություն գտավ Զմյուռնիայի հայ առաջադեմ թերթերի, մասնավորապես դեմոկրատական «Ծաղիկ» տասնօրյա հանդեսի էջերում, որն այդ օրերին խմբագրում էին Արմենակ Հայկունին և Վ. Հյուգոյի «Թշվառները» տաղանդավոր թարգմանիչ Գրիգոր Զիլինկիրյանը:

Տակավին 1861 թվականի օգոստոս ամսին «Ծաղիկը» տպագրում էր հոդվածներ Զեյթունի մասին, Ա. Հայկունու բանաստեղծությունները՝ նվիրված ղեյթունցիներին: 1862 թվականի օգոստոսի 1-ի, 10-ի և 20-ի համարների ընդարձակ առաջնորդողները, դրանից զատ մի քանի այլ հոդվածներ նվիրված են Զեյթունի ապստամբությանը և Պոլսի օգոստոսի 1-ի ցույցին: Հոդվածներում մանրամասնորեն շարադրվում են հիշյալ դեպքերի պատմությունը և բացատրությունը ապստամբության մարտակոչ է նետվում ողջ հայությանը: Օգոստոսի 1-ին «Ծաղիկը» գրում էր. «Հայեր, արդեն ժամանակը անցած է, և մեզ կամ դեպի ճշմարիտ բարեկարգության դիմել են և կամ կորուսել են իզատ ուրիշ հույս մնացած չէ, մեր բանն արդեն լմնալույն մոտ է: ... արիանանք ուրեմն և փառավոր կյանք մը ձևոք անցնելու փափաքեն ավելի մահվան ձևոքեն ազատելուն համար հարկ եղած միջոցները ձևոք առնումք, առանց աջ կամ ահակ ծրելու ճակատնիս բարձրացնեմք, անվեհեր լինեմք և մեր վատ թշնամիներուն ցուցընեմք մեյ մը ինքզինքնիս և հայտնեմք նոցա, թե հայությունը մեռած չէ, ցուցնեմք նոցա թե որքան դուրակործանելի և խարխուլ են իրենց ամբարշտական պարիսպները և վերջապես հայտնեմք նոցա թե հաղթությունը միմիայն ճշմարիտ ազգասիրաց վերջին մրցանակն է»⁵:

Հատկանշականն այն է, որ «Ծաղիկը» արմատական դիրքերից հարձակումներ էր գործում ոչ միայն թուրքական կառավարության, նրա կուսակալների, այլ նաև «վասակադեմ» այն հայերի վրա, որոնք պառակտում էին ազգը և դավաճանում ազատագրական համընդհանուր շարժմանը: Նա «ասպարեզը դինու զորություն» էր թողնում և անմիջականորեն «զինական հեղափոխություն» էր պատգամում յուրաքանչեքին: Օգոստոսի վերջին, 7 ամիս լույս տեսավ «Ծաղիկը», 24 օր բանտային կալանքի տակ դրվեց և խոշտանգումների ենթարկվեց Զիլինկիրյանը: Բանտից դուրս գալով Զիլինկիրյանը, Սվաճյանը, Հայկունին և այլոք դիմեցին կոնսպիրացիոն աշխատանքի: Նրանց ջանքերով, հայոց պատմության մեջ առաջին անգամ, Լեւոնցիի գաղտնի լիուցիկներ, որոնք ղեկի էին կոչում հայությանը, միասնական հեղափոխական պայքարի նախապատրաստում թշվառ աշխատավորներին:

Ապստամբության մասին հաղորդագրություններ տպագրեցին նաև պատրիարքարանի բերան դարձած «Մասիս», «Արշալույս Այրարատյան» և Պոլսի ու Զմյուռնիայի այլ թերթեր, որոնք բավարարվում էին կամ օտար թղթակիցների հոդվածների թարգմանական հրատարակությամբ, կամ զգուշավոր մի քանի

⁵ «Ծաղիկ», 1862, 1 օգոստոսի, № 40, էջ 333:

խորհուրդներ տալով: Թուրքական կառավարությանը և հայ ամիրաներին դուր չալու դիտավորությամբ նրանք շմասնակցեցին ազգային այդ ընդհանուր ողևորությանը, իսկ «Երևակի» ղեկավար խմբագիր Հովհաննես Չամուռնյանը այդ օրերին ուժեղացրեց պայքարը նալբանդյանի ու նրա «ձագուկների» դեմ, կառավարության ուշադրությանն արժանացրեց հակառակորդ ղեմակրառական թերթերի հոգվածները, պատճառ դարձավ նրանց փակմանը:

Ապստամբությունը արձագանք գտավ կովկասահայության մեջ, Մոսկվայի հայ գաղութում, Թեոդոսիայում և Փարիզում: Թիֆլիսում հրատարակվող «Կուռնկ հայոց աշխարհին» ամսագիրը համակրանքով վերաբերվեց Զեյթունի անցքերին: Հուլիս-օգոստոսի համարում ամսագիրը ղեկավարել էր «Թ. Թ.» ստորագրությամբ «Հայոց աշխարհեն կոնկան խապրիկները Կիլիկիայից» հոգվածը, որտեղ դրվատվում էին զեյթունցիների քաջագործությունները, դատապարտվում Ալիդ փաշան և ընդհանրապես սուլթանական կառավարությունը: «Կիլիկիայի անցքերու պատճառով հրավեր Ռուսաստանի հայերուն» կոչ-հոգվածում խմբագրությունը հիշեցնում էր հայերին կիլիկեցիների անցյալի փառքը, նրանց ըմբոստ ու քաջակորով բնավորությունը, ռուսահայերին պարտավորեցնում՝ գոնե դրամական միջոցներով օգնել վշտացյալ ու վիրավոր եղբայրներին: «Ռուսաստանի հայերն էլ,— գրում է «Կուռնկը»,— իրենք որ քրիստոնեա տերության հովանավորություն, հանգստություն և բարօրություն են վայելում, չեն մոռանում խորը Տաճկաստանում կրակի ու սրի տակ հալումաշ եղող իրենց եղբայրը»⁶:

Նույն տարվա հոկտեմբեր ամսվա համարում «Կուռնկը» Ստեփան Պալասանյանի թարգմանությամբ տպագրում է ֆրանսիական ճանապարհորդ Վիկտոր Լանգլուայի «Ճանապարհորդություն ի Կիլիկիա և ի լեռինս Տավրոսի» աշխատությունը, նպատակ ունենալով արեւելահայության մեջ համազգային պայքարի ու միասնական պետության ստեղծման սեր զարթեցնել: Նույնմբերին ամսագիրը տպագրում է նաև նոր լուրեր Զեյթունի մասին, որոնք քաղված էին «Արշալույս Այրարատյան», ֆրանսիական «Սպինիոն նասիոնալ» և «Նորդ» լրագրերից:

Զեյթունի մասին գրեցին նաև «Հյուսիս», «Կովկաս», «Մասյաց աղավնի» և արեւելահայ այլ թերթեր:

1864 թվականին «Մասյաց աղավնի» պարբերականը հրատարակեց Գեօրգե Քանանյանցի «Զեյթունի հայք և զանոնք Կովկաս փոխադրելու առաջարկությունը» ընդարձակ հոդվածը⁷: Քանանյանը շատականալով իր առաջարկի նստեանքները՝ շեն ու մարդաշատ երկրի ամայացումը, առաջարկում էր զեյթունցիներին գաղթեցնել Ռուսաստան, իսկ կառավարությանը համոզում էր երկրից դաղթած շերթեվներին փոխարինել Զեյթունի հայերով: Նրա առաջարկը արձագանքներ չգտավ, այլ հակառակ ղեկավար տվեց: Ապստամբության մասին ժամանակին և հետագայում հոգվածներ տպագրեցին «Փարիզ», «Մեղու Հայաստանի», «Փորձ», «Արձագանք», Երևանում հրատարակվող «Պսակ» և այլ պարբերականները:

Զեյթունի հերոսամարտը լուրջ ազդեցություն ունեցավ նաև Պետերբուրգի և Մոսկվայի հայ ուսանողության քաղաքական կյանքի վրա: 1863 թվականին

⁶ «Կուռնկ հայոց աշխարհին», 1862, էջ 780:

⁷ Տե՛ս «Մասյաց աղավնի», 1864, ԺԱ և ԺԲ, էջ 186—199:

ուսական այդ երկու մեծ քաղաքներում կազմակերպվեցին ուսանողական խմբակներ, որոնք համախմբվեցին «Ժողով» անունով կազմակերպության շուրջը: «Ժողովը» քաղաքական աշխատանք էր տանում ուսանողության մեջ: Խմբակի 42 հայ ուսանողների ջանքերով քննության էին առնվում նաև «Հետաքրքիր նյութեր» Տաճկաստանից եկած նամակները, հայ ազատագրական շարժումներին, Զեյթունին ու Վանին վերաբերող հոդվածները և այլն:

Զեյթունի հերոսամարտը ոգևորության անսպառ աղբյուր հանդիսացավ հայ մտավորականության համար, այն նյութ տվեց հրապարակախոսին, սյուժե արձակագրին, երգվեց հայրենանվեր բանաստեղծների դրոշմ, աշխարհով մեկ սփռված երգիչների շուրթերով:

Զեյթունի դեպքերն ամենից խոր տպավորություն գործեցին քնարերգու բանաստեղծ Մկրտիչ Պեշիկթաշլյանի վրա: Բանաստեղծը քաջատեղյակ էր ապստամբության ընթացքին. նա իր մոտ էր հրավիրում Կիլիկիայից եկած հայ պատգամավորներին, զրույցներ ունենում նրանց հետ, «դադտնի գրություններ պատրաստում և ուղարկում Զեյթուն»: 1862—1863 թվականներին Ուլնիայի հերոսամարտերի առաջ բերած ընդհանուր ոգևորության մթնոլորտում, Պեշիկթաշլյանը գրեց «Հայ քաջորդի», «Մահ քաջորդվուն», «Բաղումն քաջորդվուն», «Հայ քաջուհին», Զեյթունի երգերի հիանալի շարքը, ինչպես նաև «Եղբայր Լմբ մեք» բանաստեղծությունը: Իրար հետ օրդանապես կապված, քառամաս այս դուցազներգական պոեմի առաջին երգը «Հայ քաջորդին» է, որը գրված է Վ. Հյուգոյի «Տղան» բանաստեղծության հետևողությամբ և վարպետորեն հայացրած է՝ Այս բանաստեղծության հերոս հայրենասեր պատանին չի տարվում բնության առասպելական դեղեցկությունից, նրան չեն հրապուրում ալեկոծվող ծովը, բուրավետ ծաղիկները, մայրական անփոխարինելի փաղաքշանքը, սիրած կույսի անուշ գգվանքը: Նա իր վիշտը փարստելու համար որսվել է րալասան պահանջում է.

Դեռ ի՞նչ կույս, ո՞հ, մի ծածկեր
Կուգեմ վառող և ղեղակներ—:

«Մահ քաջորդվուն» բանաստեղծությունում արդեն հայտնի է դառնում, որ զեյթունցի քաջը «տալան է իր խնդրած վառույց ու ղեղակները, Ելել ահեղ մարտերի, կռվել է, վիրավորվել և մերձիմահ խոսում է իր մոր հետ: Նա մորը պատմում է, որ թուրքերը

Մորնշագին ինչպես վիշապ
Ու մեր վրա հարձակվեցան
Ո՛վ Հայրենիք, ի հուր, ի բոց
Քո համար մեր սիրտ վառվեցան.
Խաբիւր երկան ձեռն մեր ու դուն
Ուրախ լուրեր տաւ ի Զեյթուն:

8 Վ. Պեշիկթաշլյան, «Զեյթունի 1862 թվականի ապստամբությունը», 1950, էջ 248:
9 «Հայ նոր դրականության պատմություն», հատոր 2, 1962, երևան, էջ 342 և հետո:

Սակայն հայերը հաղթեցին, դրա համար էլ հերոսը հանգիստ փախում է իր աչքերը:

Հերոսավազի երրորդ երգը «Թաղումն քաջորդվույն» բանաստեղծությունը, նվիրված է Զեյթունի ալաուտարարի, մարտում խիզախելով ընկած պատմական դեմք՝ Մելիքսեթ Բաաժյանի թաղման արարողության նկարագրությանը: Քաջին թաղում են անշուք: Անառիկ լեռների հերոս զավակին թաղում են նույնիսկ առանց պատանքի, մարմինը փաթաթում յուրբական զնդակից արյունով ներկված սևփական շորերի մեջ, իսկ երկարաշունչ դամբանականի փոխարեն ասում.

Վասն Հայրենյաց մեռաւ. դու շատ ապրեցաւ

Այս սակավարատ խոսքի մեջ է ամփոփված, զեյթունցու կյանքի, ինչպես նաև սխրանքներով ապրող, հուզվող բանաստեղծի ստեղծագործության ամբողջ իմաստը: Զեյթունի շարքը վերջանում է «Հայ քաջուհին» բանաստեղծությամբ, որտեղ կերտված է ազգային-ազատագրական պայքարին մասնակից Զեյթունի կնոջ կերպարը և միաժամանակ հրապարակված Պեշիկթաշլյանի երազանքը՝ հայ ժողովրդի քաղաքական վերածնության, հայկական ինքնուրույն, միասնական պետականության ստեղծման մասին:

Զեյթունը երգվեց նաև մինչև օրս անհայտ բանաստեղծ, բայց հայտնի մտավորական ու հասարակական գործիչ, Կ. Պոլսի Հովհաննես ավագ քահանա Մկրյանի կողմից¹⁰: 1863 թվականի մարտի 27-ին արդեն պատրաստ էր սկզբնավաշլյանական մոտիվներով գրված Հովհաննես Մկրյանի «Դեպի Զեյթուն»

¹⁰ Հովհաննես Մկրյանը ծնվել է 1831 թվականին Պարտիզակում, 1866 թվականին նիկոնդիայում ձեռնադրվել է քահանա, 1870 թվականին կանչվել է Պոլսի և նշանակվել հայոց պատրիարքի փոխանորդ: 1878 թվականին, Բեռլինի վեճաժողովի օրերին, ներսես վարժապետ-յանը նրան առաքել է լոնդոն, որտեղ վերջինս Անգլիայի արտաքին գործերի մինիստր Սոլսբերիին ներկայացրել է՝ նրա կառավարության ուշադրությունը աշխատանքի վրա հրավիրող մի ընդարձակ հուշագիր: 1884 թվականի փետրվարի 2-ից մինչև իր մահը՝ 1909 թվականը, եղել է կրոնական ժողովի և «Վանորենի խորհրդի անդամ»: Մկրյանը թողել է «Ազոթագիրք», «Կենսագրություն Մեսրոպ զ. Թաղիազյանի նրբվանցոյ» ընդարձակ աշխատությունները, որոնք հրատարակված են: Նա ունեցել է պատմական վավերագրերի մի հսկայական հավաքածու, «նաթեր»՝ Հնդկահայոց պատմությունն են՝ ձեռագիր գործեր: ՀՍՍԻ ԳԱ Գրականության և արվեստի թանգարանի Թ. Ազատյանի, Գ. Սրվանձտյանի, Ս. Խրիմյանի արխիվային ֆոնդերում են պահվում, միայն վերջին տարիներին արտասահմանից ստացված մեծ թվով նամակները, ուղղված՝ Մ. Խրիմյանին, Մ. Նաթանյանին, Գ. Սրվանձտյանին, Մ. Օրմանյանին, Երեմիա Տեկանցին, որոնք նոր լույս են սփռում 1870—80-ական թվականների հայ հասարակական-քաղաքական շարժումների պատմության վրա:

1860-ական թվականներին, այսինքն հոգվածին կից հրապարակվող բանաստեղծությունը գրելու շրջանում, Հովհաննես Մկրյանը եղել է Կոստանդնուպոլսում, գաղափարական ու անձնական կապեր է ունեցել Հարություն Սվաճյանի, Գր. Օտյանի, Ն. Ռուսինյանի, Խաչիկ Օտյանի՝ այդ օրերի «Մեղվական երիտասարդության» հետ: Նա տեղյակ է եղել «Մեղվի» էջերում տպագրվող գրեթե բոլոր հոգվածների հեղինակներին և հետագայում իր ունեցած «Մեղու» պարբերականի հավաքածուի համարների վրա ավելացրել է հանդեսի էջերում անստորագիր տպագրված հոգվածների հեղինակների անունները: «Դեպի Զեյթուն» բանաստեղծությունը վկայում է նաև, որ Մկրյանը ևս խանդավառվել է հերոսական այդ ապստամբությամբ, կանգնած է եղել Զեյթունը պաշտպանող պոլսահայ առաջադեմ մտավորականների շարքերում:

(Սույն ծանոթագրության մեջ եղած կենսագրական տվյալները բաղել ենք Գ. Խ. Ստեփանյանի «Կենսագրական քուռարան» ձեռագիր արձեղավոր աշխատությունից):

ընդարձակ բանաստեղծությունը, որը ցայսօր անհայտ է հայ դրական աշխարհին:

Բանաստեղծը չափածո ձևով, բարձրարվեստ տողերով պատմում է Տալ-րոսի շքնաղ բնության ղեյթունցիների անցյալի սխրանքների, երկրի անսպառ հանքային հարստությունների, բարերեր հողերի, հողագործի վիճակի մասին. նրա ողևորության աղբյուրը ողջ Կիլիկիան է.

Այս. Կիլիկիա փաղցրիկ անուն.
Հանդիսարան ույոց փալաց...

Ձեյթունցի քաջազանդուր պատանին, բռնած մատաղ կույսի ձեռքից, ռազմի դաշտ է նետվում: Աղջիկը խրախույս է կարդում իր քաջին, ծուցից գնդակներ տալիս նրան: Քաջը վիրավորվում է, կույսը իր փափուկ մատներով փաթաթում է նրա վերքը և նորից ուղարկում ռազմի դաշտ: Հայերը հաղթում են Աղիզ փաշային:

Եվ հաղթեցին զայլ վահանյան
Կոխան ոտից որին բուրփին...

Ձեյթունի ղեկավարը մեծ ազդեցություն ունեցան Ռ. Պատկանյանի վրա: Ակսելով լեգենդար Քյոռ-օղլուց, բանաստեղծը եկավ դեպի հայոց պատմության ամենահերոսական դեմքերից մեկի՝ Վարդան Մամիկոնյանի կերպարի բնութագրմանը՝ անուղղակիորեն այդ օրերի հայ ազատամարտիկների փառքի գովասանքին: 1862 թ. Թիֆլիսի «Կռունկ»-ում լույս տեսավ նրա «Աղասու մոր երգը» բանաստեղծությունը, որը նվիրված էր Աբովյանի անմահ հիշատակին: Բանաստեղծության տեքստում Ձեյթուն բառը չի գործածված, սակայն քննախույզ աչքը կարող է նկատել, որ այն նվիրված է Կիլիկիայի դյուցազուններին և մարտակոչ է նետված նրանց օգնության պարտական արևելահայ ու արևմտահայ աշխատավորներին: Ի դեմս հայ պատանու, Պատկանյանը ղեգերումներից հետո գտել էր իր հերոսին, որը սակայն քնած էր, պետք է զարթնել. կապեր զենք ու զրահ և շտապեր մարտի դաշտ՝ Ձեյթուն:

Ձէ, իմ որդին շատ կգարբի, ձին կհեծնի սանձակոծ
Հայի աբցունքը կսրի, կը դադարեցնէ լաց ու կոծ.
Հայ եղբայրներ, քիչ էլ կացե՛ք, իմ Աղասին գարբեցավ,
Կոտին կապեց, բուրը կախեց ու իր ննույգ ձին նստավ:

Հստ էության Ձեյթունին է նվիրված Պատկանյանի «Օտար օրիորդ և հայ պատանի» բանաստեղծությունը:

Հայերի ազգային-ազատագրական շարժմանը արձագանքել է նաև Սմբատ Շահազիզը: Ձերմ տույեր նվիրելով Իտալիայի ազատարարներին, ռեֆլեքսիվ Վարիբալդիի ղենքի հաղթանակով, նա միաժամանակ մեծարել է հայ ժողովրդի ըմբոստացման և ընդվզման փայլուն ցուցանիշ՝ Ձեյթունի հերոսական ապստամբությունը: Ազգային-ազատագրական պայքարի միասնականությունը քարոզող բանաստեղծի տեսադաշտից չեն վրիպել այն ստոր դավերը, որ ղեյթունցիների շուրջը նյութում էին կաթոլիկ քարոզիչները: 1863 թվականին դրած «Եղվիսներ և Ձեյթուն» բանաստեղծության մեջ նա դրում է.

Ջեյթուն, սրբազան մնացորդ անցյալի,
Տավրոս լեռների հալ ազգ բնակիչ,
Արբուն կաց,— գիտե՛ս, վրադ է գալի
Եզվիդ ամբոխը. գայլեր գիշատիչ:
Նո՛հա յուրյանց հետ շատ ոսկի ունին,
Նո՛հա կշռում են դորանով կրոն...
Ականջ չդնես գետնափառ լեզվին,
Թե՛ր լրտեսին,— զինվորվիր Ջեյթուն:

Շահալիլի այս տողերը քաղաքական տագնապի ահազանգներ էին, որոնք նպատակ ունեին արգելել կաթոլիկ քարոզիչների գործունեությունը և վերացնել լազգային միասնականության վրա կախված ահավոր վտանգը¹¹:

Ինչ խոսք, ո՞վ կարող էր Ջեյթունի փառքն ավելին գովերգել, քան ինքը՝ սլաշքարող ու նահատակվող, խիզախ ու անվեհեր, դարերի ազատամարտիկ քաջ ու տաղանդավոր զեյթունցին: Ջեյթունի պոեզիան ամբողջովին ներծծված է ազատասիրական մտորումներով, մեռնող քաջի գովասանքով, թույլի ու վախկոտի պարսավանքով, բոլորին դեպի մարտ կոչելով: «Քայլերգ Ջեյթունի», «Երգ զեյթունցվոց», «Ջեյթուն անկախ», «Ջեյթունցիներ», «Ջեյթունցիք», «Ջեյթունցիներուն» և այլ բանաստեղծությունները, որոնք անխտիր բոլորն էլ երգի են վերածված և մինչև օրս երգվում են, գովերգում է գավառի քաջամարտիկների սխրանքները, ոգևորում Տավրոսի բնակիչներին, փորձում ցույց տալ լույսի ու ազատության շավիղը:

«Ջեյթունցիներ» քայլերգը սիմֆոնիկ նվագախմբի համար գործիքավորել է ռուս ականավոր կոմպոզիտոր Իպպոլիտով-Իվանովը. այն մինչև օրս էլ խրդվում է.

Արևն ելավ, զեյթունցիներ
Դեն, ձի հեծենե՛ք առենե՛ք զենե՛ր,
Ինչո՞ւ, ինչո՞ւ զլուխ ձռնե՛ք
Ռոնավորին մեր վիզ պարզած:
Կեցցե Ջեյթուն, ապրի Ջեյթուն
Թող շտեսնե՛ ստրկություն
Քանի ունի մեզ պես որդիք
Ապրի՛ Ջեյթուն, կեցցե՛ Ջեյթուն:

Քառաձայն երկսեռ խմբի կատարման նպատակով այս երգը վերամշակվեց Աշոտ Պատմագրյանի կողմից:

Ջեյթունցիների կողմից գրված են հայատառ թուրքերեն հսկայական երգեր, որոնք հավասարաշափ հոգեհարազատ են եղել Թուրքիայի տիրապետության տակ գտնվող ճնշված մյուս ժողովուրդների, առավելապես բուլղարների համար:

Այսպիսով, Ջեյթունի ապստամբության լուրը թափանցեց հայաբնակ բոլոր անկյունները, ոգևորեց ազատության ծարավի հայ ժողովրդի աստանդական բեկորներին, համազգային նշանակություն և հետագա լուրջ ազդեցություն ունեցավ լազգային կազմավորման, համազգային շարժումների առաջացման գործում:

Դժբախտաբար Ջեյթունին խաղաղ կյանք երկար չվիճակվեց, իսկ առաջին համաշխարհային սպանդի ժամանակ թուրք բարբարոսները արեւմտահայու-

¹¹ «Հայ նոր գրականության պատմություն», հատոր 2, էջ 305:

թյան հետ տեղահան արեցին նաև զեյթունցիներին: Քանզվեց արծավարույնը, մարեց ազատագրական պայքարի այդ լուսատու օջախը: Սակայն այդ օրերին փայլեց մեծ Հոկտեմբերի կենարար արևը, իսկական ազատության հաստիքները: Արևելյան Հայաստանը:

Այսօր ծաղկել է Մայր Հայրենիքը: Սովետական Հայաստանը պատվավոր տեղ է զբաղեցրել կոմունիզմ կառուցող սովետական մեծ ու բազմազգ ընտանիքում: Ազատագրված հայ ժողովուրդը միշտ վառ է պահում Զեյթունի փառքը, իր սոցիալիստական հայրենիքի չքնաղ մայրաքաղաքի արվարձաններն անվանելով՝ Զեյթուն, Կիլիկիա, Հաճըն, նպատակ ունենալով կանխորոշել այն ուղիները, որով հեռավոր հորիզոնների տակ ապրող, հարազատ, բայց տարագիր եղբայրները պետք է վերադառնան Մայր Հայրենիք՝ Սովետական Հայաստան:

ՀՈՎՀ. Ս. ՄԿՐՅԱՆ

ԴԵՊ 'Ի ԶԵՅԹՈՒՆ

Խինչդեռ գարուն ծիծաղերև
Հազար ու բյուր ծաղիկներով,
Կզարդարվի նոր հարսի պես
Կարմիր, կապուտ, հերմակ գունով
Ազատ հայուն սիրտն տանի
'Ինչ ի Զեյթուն ազատանի:

Այն լարձրաբերձ Տորոս լեռան
Հսկա ծառերն ու գունդ ժայռեր,
Պարարտ արոտ դաշտ անեման
Չքնաղ հովիտ միշտ լարեբեր,
Ազատ հայուն սիրտն տանի
'Ինչ ի Զեյթուն ազատանի:

Ուր՝ զանազան ազնիվ հանքեր
Արծաթ, պղինձ և երկաթի,
Հայոց բաղդին պետքի նյութեր
Անհուն դիզված ի մեջ գետնի
Ազատ հայուն սիրտն տանի
'Ինչ ի Զեյթուն ազատանի:

Հոն՝ ուր ձևավոր հողագործին
Պարապ շելներ, այլ միշտ շահով,
Կսերմանե, և կհեծե
Հարյուրավոր՝ փոխան մեկին,
Ազատ հայուն սիրտն տանի
'Ինչ ի Զեյթուն ազատանի:

12 Մեր կողմից հայտնարենված այս բանաստեղծության տողերի սկզբնատառերը, բացի յուրաքանչյուր տան առաջին տողի սկզբնատառից, հնդինակը գրել է փոքրատառով, իսկ մենք փոխել ենք և դարձրել մեծատառ: Բնագրի կետադրությունը պահպանել ենք (Հ. Ղ.):

Ա՛յս, Կիլիկիա, փողերիկ անուն
Հանդիսարան հայոց փառաց
Ուր թափեցավ վերջին արյուն
Իշխանության մեր և փառաց
Ազատ հայուն սիրտն տանի
Դեպ ի Զեյթուն ազատանի:

Հո՛ն, դարձյալ հոն, ինչպես փյունիկ
Հայոց մոխրեն կծնանին
Թափված արյանց ազատտոհմիկ
Հո՛ւր ի սրտին, սո՛ւր ի ձեռին,
Ազատ հայուն սիրտն տանի
Դեպ ի Զեյթուն ազատանի:

Քաղազանգուր տե՛ս պատանի
Բռնած՝ աղջիկ կուսին լազկեն
Լեռենն ի վայր կիշնա ուժգին
Ճգմել զլուս անգուր քրքին
Հայոց մանկան սիրտն տանի
Դեպ ի Զեյթուն ազատանի:

Տե՛ս, շի գատվիր կույսն ի փառեն
Մոցեն կուտա զեղակ, վառող,
Խրախույս կարգա նա ակնջեն,
— Զա՛րկ, մի գրար, ևս կամ քո մոտ
Հայ աղջկանց սիրտն տանի,
Դեպ ի Զեյթուն ազատանի:

Սեն, վերք կառեն փառն Լեռսին
Արյուն հոսի ոսկեպտուղ,
Զայն մազերով յուր՝ սիրունին
Կփաթաթե մատամբ կակուղ,
Հայ պասանյաց սիրտն տանի
Դեպ ի Զեյթուն ազատանի:

Եվ հուզվեցան հայոց բանակ...
Առյուծաբար Լիին ի մարտ.
— Ո՛հ անդր, հառա՛ջ, մի՛ հա՛ջ, յանյակ—
Եվ ինկան շատ քրքոց զազաթ,
Ազատ հայոց սիրտն տանի
Դեպ ի Զեյթուն ազատանի:

Եվ հաղթեցին զտյլք Վսեմայան
Կոխան ոտից բրին թուրքին
Ու դրոշակն ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
Կանգնեցին հոն ներքև խաչին
Ամեն հայոց սիրտն տանի
Դեպ ի Զեյթուն ազատանի:

Ա՛խ, այն դրոշին ազատության
 Փայլուն, վսեմ, վեհ ծածանում,
 Պատռեց զբոլ մեր զերության
 Եվ սփռվեց սրտեր տրտում,
 Եվ որ տարավ, ու կտանի
 Դեպ ի Զեյթուն ազատանի¹³:

¹³ ՀՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարան, Թ. Ազատյանի տրիտիվ, բաժին 1-ին,
 * Խառնաշուրթ Ա՝ 104, էջ 7—10: